

[1] Դուրս գրման ամսաթիվ			Հաշիվ վավերագիր (ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման)	[2] Մերիա	[3] Համար
22	Ապրիլ	2019 թ.		Բ	6094488856
[4] Մատուցման ամսաթիվը				Ճշգրտվող հաշիվ վավերագրի	
22	Ապրիլ	2019 թ.		Մերիա	Համար
				Ճշգրտվող հաշիվ վավերագրի դուրս գրման ամսաթիվ	
Պայմանագիր			[5] Կնքման ամսաթիվ	[6] Համար	
			22 Ապրիլ, 2019 թ.	Բ6094488856	
[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)					
ԳՐԱՎՈՐ ԵՎ ԲԱՆԱՎՈՐ ԹԱՐԳՄԱՆՉԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՈՒՄ					
[7.1] ՀՂՄ կտրոնի համար					

Ծառայություններ մատուցող (աշխատանքներ կատարող) անձի								
[8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)	0	0	1	2	4	1	0	5
[9] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը								
[10] Անվանումը	«ՖԻՆԼՈՈՒ» Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն (ՍՊԸ)							
[11] Բանկային տվյալները	ԱՐԴԵԻՆԲԱՆԿ ՓԲԸ			N 2474602078940000				
[12] Գտնվելու վայրը (հասցեն)	ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ							
[13] Լրացուցիչ տվյալներ								

Ծառայություններ (աշխատանքներ) ստացող անձի								
[14] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը)	0	2	6	3	1	2	6	3
[15] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը								
[16] Անվանումը	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» Պետական կառավարչական հիմնարկ							
[17] Բանկային տվյալները	ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն			N 900011000834				
[18] Գտնվելու վայրը (բնակության վայրը)	ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ՄԱՍԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5							
[19] Լրացուցիչ տվյալներ								
[20] Ում միջոցով	Անուն, ազգանուն							
	Լիազորագիր	Համար						
		Ամսաթիվ						


[21] Ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) ծավալի և վճարման ենթակա գումարի հաշվարկը						
№№ Ը/Կ	Ծառայությունների (աշխատանքների) անվանումը (բովանդակությունը)	Չափի միավորներ	Ընդհանուր ծավալը կամ ժամանակահատվածը	Միավորի գինը	Զեղչ (%)	Մրժեքը
1	2	3	4	5	6	7
1	իրավաբանական բանավոր թարգմ. հայերեն-թուրքերեն-հայերեն Սահմ Ավյրի ինքնասպան վերաբերյալ նյութով	ժամ	8	7000		56000
2	իրավաբանական բանավոր թարգմանություն հայերեն-ռուսերեն-հայերեն քր. գործ թիվ 17136716	ժամ	11	5000		55000
3	իրավաբանական բանավոր թարգմանություն հայերեն-ռուսերեն-հայերեն քր. գործ թիվ 11139716	ժամ	2	5000		10000
4	իրավաբանական բանավոր թարգմանություն հայերեն-ռուսերեն-հայերեն քր. գործ թիվ 17167116	ժամ	3	5000		15000
5	իրավաբանական բանավոր թարգմանություն հայերեն-ֆրանսերեն-հայերեն քր. գործ թիվ 17138616	ժամ	9	7000		63000
6	իրավաբանական բանավոր թարգմանություն հայերեն-չինարեն-հայերեն քր. գործ թիվ 54102616	րոպե	2800	216.67		606676
Ընդամենը						805676



Մատուցող (աշխատանք կատարող)
SHAHINYAN VARDUHI 7803710425

(ստորագրությունը, անունը, ազգանունը)

Ծառայություն (աշխատանք) ստացող՝



(ստորագրությունը, անունը, ազգանունը)

22/04/2019 13:45:27



Ո Ր Ո Շ ՈՒ Մ

Թարգմանիչ ներգրավելու մասին

«29» հունիսի 2016թ.

ք.Երևան

«Քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի քննչական բաժնի քննիչ, արդարադրության ավագ լեյտենանտ՝ Ա.Ս.Կարախանյանս, քննարկելով Սահմ Ավջրի ինքնասպանության վերաբերյալ նախապատրաստված նյութերը

Պ Ա Ր Ձ Ե Ց Ի

2016 թվականի հունիսի 19-ին ժամը 19:35-ին «Արաբկիր» շտապօգնության ենթակայանից ոստիկանության Քանաքեռ-Զեյթունի բաժնի ահազանգ է ստացվել այն մասին, որ 077 44-49-30 հեռախոսահամարից կանչ է ստացվել Երևան քաղաքի Վարշավյան 4 շենքի 17ա բնակարան և երբ թիվ 14 բրիգադը ժամանել է նշված հասցե՝ հայտնաբերել է Սահմ Ավջրի /ծնվ 01.03.1974թ., հաշվառված Թուրքիայի Հանրապետություն, քաղաք Ստամբուլ, Սատիհի շրջան, Քոջա Մուստաֆա Փաշա թաղամաս, Բաքրթյոյ փողոց, 22 շենք, 12 բնակարան, փաստացի բնակ. քաղաք Երևան. Վարշավյան փողոց 4 շենք 17ա բնակարան, Թուրքիայի Հանրապետության քաղաքացի/ կախված դին:

Դեպքի առթիվ Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի քննչական բաժնում նախապատրաստվում են նյութեր:

Նյութերի նախապատրաստման ընթացքում Բուրհան Գյուզենգիլին հայտարարել է, որ չի տիրապետում հայերեն գրավոր լեզվին, այլ ազատորեն տիրապետում է թուրքերեն գրավոր լեզվին, ուստի ղեկավարվելով «Քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածի պահանջներով.

Ո Ր Ո Շ Ե Ց Ի


1. Սահմ Ավջրի ինքնասպանության վերաբերյալ նախապատրաստվող նյութերում որպես թարգմանիչ ներգրավել «Ֆինլոո» ՍՊԸ-ի աշխատակից՝ Գևորգ Կալոշյանին. որին պարզաբանել «Քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածը և նախազգուշացնել «Քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

**Քանաքեռ-Զեյթուն քննչական
բաժնի քննիչ՝**



Ա.Ս.Կարախանյան

Որոշման հետ ծանոթացա, իմ իրավունքները և պարտականությունները ինձ պարզաբանված են Թարգմանիչ՝



« 29 » հունիսի 2016թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
Թարգմանիչ հրավիրելու մասին

«08» հուլիսի 2016թ.

ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Ավան և Նոր Նորք վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ՝ Օ.Գ.Հարությունյան, քննարկելով վարույթիս տակ գտնվող թիվ 17136716 քրեական գործի նյութերը.

Պ Ա Ր Ձ Ե Ց Ի

03.07.2016թ.՝ ժամը 12:00-ին, ոստիկանության Նոր Նորքի բաժնում հաղորդում է տվել Նաիրա Լորիկի Գուրջինյանն այն մասին, որ իր բնակարանի բանվորներ՝ ոմն Էդգարը և Գարիկը, 2016թ. հունիսի 27-ին կամ 28-ին, Երևան քաղաքի Նոր նորքի 4-րդ զանգվածի Գյուլիքեխվյան փողոցի 3-րդ շենքի իր թիվ 21 բնակարանի սանհանգույցի վերանորոգման աշխատանքները կատարելու ընթացքում, օգտվելով ընտանիքի անդամների անուշադրությունից՝ գաղտնի հափշտակել են հյուրասենյակի պահարանի զարդատուփերում առկա տարբեր տեսակի ոսկյա զարդեր և բիժուտերիա՝ իրեն պատճառելով ընդհանուր առանձնապես խոշոր չափերի՝ 3.865.000 ՀՀ դրամի գույքային վնաս:

Գեպքի առթիվ 04.07.2016թ. Ավան և Նոր Նորք վարչական շրջանների քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով հարուցվել է թիվ 17136716 քրեական գործը:

Քրեական գործով անհրաժեշտ է հարցաքննել Նաիրա Լորիկի Գուրջինյանին և Լորիկ Գուրջինյանին, ովքեր չեն տիրապետում հայերեն գրավոր լեզվին, տիրապետում են հայերեն բանավոր, ռուսերեն գրավոր և բանավոր լեզուներին:

Ոստի Նաիրա և Լորիկ Գուրջինյանյաններին հարցաքննելու նպատակով քրեական գործով անհրաժեշտ է հրավիրել թարգմանիչ, որը տիրապետում է հայերեն և ռուսերեն գրավոր ու բանավոր լեզուներին և կարող է կատարել թարգմանություններ հայերենից ռուսերեն և հակառակը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քր. դատ. օր. 83 հոդվածով.

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Վարույթիս թիվ 17136716 քրեական գործով, որպես թարգմանիչ հրավիրել «Ֆինլոու» ՍՊԸ-ի թարգմանիչ՝ Անուշ Խանիկյանին, որն ունի բարձրագույն կրթություն, ռուսերեն լեզվից թարգմանություններ կատարելու փորձ և որակավորում, ազատորեն տիրապետում է հայերեն և ռուսերեն գրավոր ու բանավոր լեզուներին և կարող է կատարել թարգմանություն, քրեական գործով չշահագրգռված անձ է:

2. Որոշման մասին հայտնել թարգմանիչին, նրան պարզաբանել ՀՀ քր. դատ. օր. 83 հոդվածով նախատեսված իր իրավունքները և պարտականությունները, նախազգուշացնել ակնհայտ սուտ թարգմանություն կատարելու համար նախատեսված քրեական պատասխանատվության մասին:


Ավագ քննիչ՝



Օ.Գ.Հարությունյան

Որոշումը ինձ հայտնվել է, պարզաբանվել են ՀՀ քր. դատ. օր. 83 հոդվածով նախատեսված իմ իրավունքներն և պարտականությունները, նախազգուշացվել են ակնհայտ սուտ թարգմանություն կատարելու համար նախատեսված քրեական պատասխանատվության մասին: Համաձայն են կատարել թարգմանություն:

Թարգմանիչ՝



Ա.Խանիկյան

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Քրեական գործով թարգմանիչ ներգրավելու մասին

« 11 » հուլիսի 2016թ.

ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Շենգավիթ վարչական շրջանի քննչական բաժնի քննիչ Ա. Օրդակյանս, քննարկելով վարույթումս գտնվող թիվ 11139716 քրեական գործի նյութերը.

Պ Ա Ր Ձ Ե Ց Ի

2016թ. մայիսի 20-ին Թամարա Ասատրյանը ոստիկանության Շենգավիթի բաժնում հաղորդում է տվել այն մասին, որ որդու կինը՝ Մերի Նորայրի Բաղայանը, նույն օրը՝ ժամը 19.30-ի սահմաններում, Երևան քաղաքի Ն. Շենգավիթ 2-րդ փողոցի 17 հասցեի տանը կենցաղային հարցերի շուրջ վիճաբանել է իր և դստեր՝ Իվետտա Ասատրյանի հետ, որի ժամանակ ձեռքերով հարվածել է իրենց և քաշել իր մազերից՝ պատճառելով ֆիզիկական ցավ:

Փաստի առթիվ 30.05.2016թ. ՀՀ քննչական կոմիտեի Շենգավիթ վարչական շրջանի քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 118 հոդվածով հարուցվել է թիվ 11139716 քրեական գործը, Ի. Ասատրյանը ճանաչվել է տուժող և կատարվում է նախաքննություն:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ քրեական գործով տուժող Ի. Ասատրյանը չի տիրապետում հայերեն գրավոր լեզվին, տիրապետում է միայն ռուսերեն լեզվին, մինչդեռ Հայաստանի Հանրապետությունում դատավարությունն իրականացվում է հայերեն լեզվով, անհրաժեշտություն է առաջացել սույն քրեական գործով վարույթին ներգրավել թարգմանիչ՝ Վարդուհի Ավետիսի Շահինյանի մասնակցությամբ կատարվելիք քննչական գործողություններին մասնակցելու համար:

Վերոգրյալի հիման վրա, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15, 55 և 83 հոդվածներով.

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Թիվ 11139716 քրեական գործով որպես թարգմանիչ ներգրավել «Ֆինլոու» ՍՊԸ-ի տնօրեն, թարգմանչուհի Վարդուհի Ավետիսի Շահինյանին /անձնագիր՝ AH0512851/, որը ստացել է ռուսերեն լեզվից թարգմանչի համապատասխան որակավորում:
2. Վարդուհի Ավետիսի Շահինյանին պարզաբանել ՀՀ ՔԴՕ 83-րդ հոդվածով նախատեսված թարգմանչի իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև նախազգուշացնել ՀՀ քր. օր-ի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

Քննիչ՝

Ա. Օրդակյան

Ծանոթացա թարգմանչի իրավունքներին և պարտականություններին, նախազգուշացվել եմ ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

Վ. Ա. Շահինյան

« 11 » հուլիսի 2016թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

/Թարգմանիչ ներգրավելու մասին/

12 հուլիսի 2016թ.

ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության քննիչ՝ Ա.Համգոյանս, վերանայելով վարույթիս թիվ 17167116 քրեական գործի նյութերը.

Պ Ա Ր Ջ Ե Ց Ի՝

01.06.2016թ. ժամը 16:30-ին ոստիկանության Նոր Նորքի բաժին է ստացվել մանկահասակ, 03.02.2012թ. ծնված՝ Էմմա Հովհաննեսի Ասատրյանի մարմնական վնասվածք ստանալու հիման վրա նախապատրաստված նյութերն այն մասին, որ վերջինս 08.04.2016թ. ժամը 19:10-ին „ձախ սրունքի ոտնաթաթի սալջարդ,, ախտորոշմամբ տեխափոխվել է „1-ին համալսարանական,, ԲԿ:

Նյութերի նախապատրաստման ընթացքում Է.Ասատրյանի տատն՝ Էմմա Երջանիկի Հակոբյանն բացատրությամբ հայտնել է, որ նույն օրը ժամը 18:00-ի սահմաններում Է.Ասատրյանն իրենց՝ Ավան համայնքի Իսահակյան թաղամասի թիվ 2/3 շենքի բակում խաղալիս՝ պատահաբար ոտքը հարվածել է բակում կայանված ավտոմեքենային ու վայր ընկնելու հետևանքով ստացել է մարմնական վնասվածք:

Է.Ասատրյանի մայրը՝ Լուսինե Սաշայի Ասատրյանը բացատրությամբ հայտնել է, որ կատարվածից օրեր անց դուստրը պատմել է, որ հիշյալ օրը բակում երեխաների հետ խաղացել է ու այդ ընթացքում երեխաներից մեկը վիրավորել է իրեն և լացելով փորձել է անցնել ճանապարհի երթևեկելի հատվածը, սակայն պատահական „Օպել,, մակնիշի ավտոմեքենան հարվածել և վայր է գցել:

31.05.2016թ. ստացվել է դատաբժշկական փորձագետի թիվ 1353 եզրակացությունը, համաձայն որի՝ Է.Ասատրյանի ստացած մարմնական վնասվածքները ձախ սրունքի զույգ ոսկրերի ս/3-ի փակ տեղաշարժով կոտրվածքի ձևերով պատճառվել են բուրձ առարկայի /ների/ ներգործության հետևանքով, հնարավոր է նշված ժամանակին և տուժողի կողմից նշված հանգամանքներում՝ այն է վրաերթի հետևանքով, սակայն ավելի կոնկրետ հնարավոր կլինի պարզել հագուստների՝ որոնք եղել են դեպքի պահին վերջինիս հագին՝ հետքաբանական ուսումնասիրությամբ, որոնք պատճառել են առողջության ծանր վնաս՝ որպես կյանքին վտանգ սպառնացող

Դեպքի առթիվ 06.06.2016թ. ոստիկանության Նոր Նորքի բաժնում ՀՀ քր. օր-ի 242-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է թիվ 17167116 քրեական գործը, որն ըստ ենթակայության՝ 07.06.2016թ. ուղարկվել է Երևան քաղաքի քննչական վարչություն:


Նկատի ունենալով, որ քրեական գործով անհրաժեշտություն է առաջացել որպես վկա հարցաքննել Վլադիմիր Գավրիլի Վարտանովին իսկ վերջինս ազգությամբ չի տիրապետում հայերեն գրավոր և բանավոր լեզվին, խոսում է ռուսերեն, գրում է ռուսերեն լեզվով, ուստի ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ, 83-րդ հոդվածների պահանջներով.

Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝

1. 17167116 քրեական գործով որպես թարգմանիչ ներգրավել «Ֆինլու», ՍՊԸ-ի տնօրեն, թարգմանիչ՝ Վարդուհի Ավետիսի Շահինյանին /ծնված 28.03.1971թ., բնակվում է ք.Երևան Բաղրամյան 62-րդ շենքի 48-րդ նակարանում/ և վերջինիս բացատրել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված թարգմանչի իրավունքները և պարտականությունները:



2. Վարդուհի Ավետիսի Շահինյանին նախազգուշացնել ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվության մասին:

ՔՆՆԻՉ՝



Ա.ՀԱՄԶՈՅԱՆ

Ծանոթացա որոշմանը՝
12.07.2016թ.



Ո Ր Ո Շ ՈՒ Մ
Թարգմանիչ հրավիրելու մասին

«14» հուլիսի 2016թ.

ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ Ս.Թասալյան, քննարկելով վարույթիս թիվ 17138616 քրեական գործի նյութերը.

Պ Ա Ր Ձ Ե Ց Ի

Միքայել Վրեժի Միքայելյանը 2016 թվականի հուլիսի 02-ին, ՀՀ ոստիկանության Նոր Նորքի բաժնում հաղորդում է տվել այն մասին, որ նույն օրը ժամը 21:30-ի սահմաններում, Երևան քաղաքի Նոր Նորքի 1-ին զանգվածում գործող «Տաշիր Պիցցա» սրճարանում՝ իր և Ալեն Հակոբ Օղեմիսի միջև ծագած վիճաբանության ժամանակ, վերջինս ձեռքերով և ոտքերով հարվածներ է հասցրել իր դեմքի և գլխի շրջանին՝ պատճառելով մարմնական վնասվածքներ և ֆիզիկական ցավ:

Դեպքի առթիվ Ավան և Նոր Նորք վարչական շրջանների քննչական բաժնում ՀՀ քր օր-ի 118-րդ հոդվածով հարուցվել է թիվ 17138616 քրեական գործը, ընդունվել վարույթ:

Քրեական գործով անհրաժեշտություն է առաջացել որպես վկա հարցաքննելու Ալեն Հակոբի Օղեմիսին, ով չի տիրապետում հայերեն գրավոր խոսքին / լեզվին /, սակայն ազատորեն տիրապետում է ֆրանսերեն գրավոր և բանավոր խոսքին:

Նկատի ունենալով, որ Ալեն Հակոբի Օղեմիսը չի տիրապետում հայերեն գրավոր խոսքին / լեզվին /, սակայն ազատորեն տիրապետում է ֆրանսերեն գրավոր և բանավոր խոսքին, իսկ «Ֆինլոու» ՍՊԸ-ի թարգմանիչ Վարդուհի Վարդգեսի Հայրապետյանը ազատորեն տիրապետում է հայերեն և ֆրանսերեն լեզուներին, ունի բարձրագույն կրթություն, շահագրգռված չի գործի ելքով, ուստի ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ և 83-րդ հոդվածներով.

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Թիվ 17138616 քրեական գործով «Ֆինլոու» ՍՊԸ-ի թարգմանիչ Վարդուհի Վարդգեսի Հայրապետյանին ճանաչել թարգմանիչ՝ նրան պարզաբանելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները և նախազգուշացնել ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

Ավագ քննիչ՝



Ս.Թասալյան

Ծանոթացա որոշմանը, ինձ պարզաբանվել են իմ իրավունքներն ու պարտականությունները:

Թարգմանիչ՝



Վարդուհի Հայրապետյան

22.07.2016թ.

ք.Աշտարակ

ՀՀ քննչական կոմիտեի Արագածոտնի մարզային քննչական վարչության Թալինի քննչական բաժնի ավագ քննիչ՝ Վ.Մարտիրոսյանս, ուսումնասիրելով իմ վարույթում գտնվող թիվ 54102616 քրեական գործի նյութերը,

Պ Ա Ր Չ Ե Ց Ի՝

02.07.2016թ. ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ընդերքի պետական տեսչության աշխատակիցների կողմից ՀՀ Արագածոտնի մարզի Արագածավան համայնքում՝ հեղեղատարի սկզբնական հատվածում (y=8393445, x=4471359 ARMWGS-84 կոորդինատային համակարգով կետից շուրջ 50մ շառավիղով տարածքից), որը սահմանակից է նաև Կանչ համայնքի վարչական տարածքին, հանքարդյունահանողների կողմից շահագործվող տեղամասերի կոորդինատների ճշտման աշխատանքների իրականացման ժամանակ հայտնաբերվել է ընդերքի ապօրինի (առանց թույլտվության) շահագործման դեպք:

Դեպքի առթիվ 09.07.2016թ.-ին ՀՀ քննչական կոմիտեի Արագածոտնի մարզային քննչական վարչությունում ՀՀ քրեական օրենսգրքի 291-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 54102616 քրեական գործը և կատարվում է նախաքննություն:

Քրեական գործի նախաքննության ընթացքում անհրաժեշտություն է առաջացել հարցաքննել Չինաստանի ժողովրդական Հանրապետության քաղաքացի Թանգ Շանին /TANG SHAN/, ով չի տրապետում հայերեն գրավոր և բանավոր լեզվին:

„ՖԻՆԼՈՒՒ,, ՍՊ ընկերության թարգմանիչ՝ Աշխեն Վարդանի Պապիկյանը /ծնված 1991թ. Հաշվառված է ք.Ալավերդի Սայաթ Նովա 9 բն. 14/, բավարար չափով տիրապետում է հայերեն և չինարեն գրավոր և բանավոր լեզուներին:

Աշխեն Պապիկյանը թիվ 54102616 քրեական գործով հանդիսանում է չշահագորգված անձ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ և 83-րդ հոդվածներով,

Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝

1. Աշխեն Վարդանի Պապիկյանին թիվ 54102616 քրեական գործով ճանաչել թարգմանիչ:

2. Ա.Պապիկյանին ծանոթացնել սույն որոշումը և նրան պարզաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով սահմանված, որպես թարգմանիչ նրա իրավունքները և պարտականությունները:

Միաժամանակ թարգմանչին նախազգուշացնել առանց քննիչի թույլտվության նախնական քննության տվյալները հրապարակելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ, 342-րդ հոդվածներով նախատեսված պատասխանատվության մասին:

Թարգմանչին նախազգուշացնել նաև թարգմանություն կատարելիս տրամադրված նյութերի պահպանության նկատմամբ անփութություն ցուցաբերելու հետևանքով դրանց կորստի, ոչնչացման կամ հափշտակման դեպքում Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 315-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

Ավագ քննիչ՝

Վ.Ռ.Մարտիրոսյան

Սույն որոշումն ինձ ծանոթացվել է,
բացատրվել են իմ իրավունքներն ու պարտականությունները

Ա.Պապիկյան

„ 22 . 07 2016թ